ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 03/2021

ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 17 սեպտեմբերի, 2021 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Մարտիկ Թևոնյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2021 թվականի հունիսի 22-ին հարուցված թիվ 03/2021 վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2021 թվականի մայիսի 28-ին «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցի «Արարատի մարզպետը շարունակում է մնալ «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ի տնօրենը» վերտառությամբ (https://hetq.am/hy/article/131475) հրապարակման (այսուհետ՝ Հրապարակում) հիման վրա Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 18-ի որոշմամբ Ռազմիկ Թևոնյանի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցվել է վարչական վարույթ: Վարույթի

հարուցման համար հիմք հանդիսացած նյութի ուսումնասիրությամբ վեր են հանվել նաև հետևյալ փաստական տվյալները.

1) Ըստ Հրապարակման տեղեկությունների. «Նշենք, որ Երասխի գինու գործարանը պետական ռեգիստրում գրանցված է 1997թ-ից: Մինչև 1999թ-ը ունեցել է Մ. Թևոնյանի Երասխի գինու գործարան անվանումը, իսկ դրանից հետո «Երասխ գինու գործարան» ՍՊԸ: Ընկերության 100% բաժնեմասը պատկանում է մարզպետի ազգականին՝ Մարտիկ Թևոնյանին, ով 1991թ-ից Արարատի մարզի Արալեզ համայնքի ղեկավարն է (մեջբերումը հրապարակումից, Հետք, Արարատի մարզպետը շարունակում է մնալ «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ի տնօրենը, 2021 թվականի մայիսի 28,https://hetq.am/hy/article/131475)»:
2) Թիվ 18 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N 154-Ա որոշման համաձայն՝ 2016 թվականի սեպտեմբերի 18-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Արարատ մարզի Արալեզ համայնքի ղեկավար է ընտրվել Մարտիկ Թևոնյանը, ով շարունակում է պաշտոնավարումը մինչ օրս:
3) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Պետական ռեգիստր) պետական միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Մարտիկ Թևոնյանը 1997 թվականի դեկտեմբերի 5-ից գրանցվել է որպես «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միակ մասնակից:
4) Մարտիկ Թևոնյանը ընդունել է 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 1/21 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները դադարեցնելու և նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ:

2. 2021 թվականի հունիսի 22-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 03/2021 որոշումը՝ ներկայացված Հրապարակման հիման վրա անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

3. 2021 թվականի հունիսի 24-ին անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկել է Մարտիկ Թևոնյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում քննարկվող հարցի առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

4. 2021 թվականի հուլիսի 9-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Մարտիկ Թևոնյանը ներկայացրել է պարզաբանում հարուցված վարույթի փաստական հանգամանքների վերաբերյալ: Գրությանը կից ներկայացվել է նաև 2004 թվականի սեպտեմբերի 10-ի գույքի անհատույց օգտագործման թիվ 2155 պայմանագրի պատճենը: Միաժամանակ, վերջինս հայտնել է, որ նշված պայմանագրով գույքը և դրա կառավարումը հանձնել է Ընկերությանը:

5. 2021 թվականի հուլիսի 27-ի գրությամբ Հանձնաժողովը Մարտիկ Թևոնյանին տեղեկացրել է, որ իր կողմից ներկայացված պայմանագիրը չի վերաբերում գույքի (սույն գործով բաժնեմասի) հավատարմագրային կառավարմանը:

6. 2021 թվականի օգոստոսի 23-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Մարտիկ Թևոնյանը ներկայացրել է լրացուցիչ պարզաբանում: Նույն գրությամբ Մարտիկ Թևոնյանը ներկայացրել է 2021 թվականի օգոստոսի 19-ին կնքված Ընկերության բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրի պատճենը՝ վավերացված նոտարական կարգով:

7. Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով Հանձնաժողովը գրավոր դիմել է Ընկերությանը, Կադաստրի կոմիտեին, Պետական ռեգիստրին, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեին:

8. Վարույթում քննարկվող փաստական հանգամանքների բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով 2021 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 11:00-ին Հանձնաժողովում նշանակվել են վարչական լսումներ, որն իրականացվել է Մարտիկ Թևոնյանի մասնակցությամբ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2021 թվականի օգոստոսի 23-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Մարտիկ Թևոնյանը պարզաբանում է ներկայացրել առ այն, որ 2004 թվականի սեպտեմբերի 10-ի գույքի անհատույց օգտագործման թիվ 2155 պայմանագրով իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի՝ տարածքի հանձնումը Ընկերությանը իր կողմից հասկացվել է որպես հավատարմագրային կառավարման հանձնում: Նույնը հայտնել է նաև, 2021 թվականի սեպտեմբերի 9-ին

Հանձնաժողովում իրականացված վարչական լսումների ընթացքում: Մարտիկ Թևոնյանը լսումների ընթացքում նշել է նաև, որ այժմ հասկացել է այն, որ Ընկերության բաժնեմասը պետք է հանձնվեր հավատարմագրային կառավարման և, որ վարույթի ընթացքում արդեն կնքել է Ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին պայմանագիր: Հանձնաժողովի այն հարցին՝ արդյո՞ք վերջինս մշտապես մասնակցել է Ընկերության կառավարմանը, Մարտիկ Թևոնյանը պատասխանել է այո՝ նշելով, որ Ընկերության կառավարման հետ կապված հարցերը լուծվել են իր մասնակցությամբ:

III. Անհամապատասխանության պահանջների առերևույթ խախտման վարույթի շրջանակներում պարզված փաստեր.

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, վարույթի մասնակիցներից ստացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

1. 2021 թվականի օգոստոսի 3-ին Կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի նկատմամբ տվյալ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

2. Նշված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացի Մարտիկ Հովհաննեսի Թևոնյանի անվամբ՝ [redacted] անշարժ գույքի միավորների և [redacted] հողամասերի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք [redacted] կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

3. Նշված տեղեկատվության համաձայն՝ Մարտիկ Թևոնյանի և Ընկերության միջև 2004 թվականի սեպտեմբերի 10-ին կնքվել է Արարատի մարզ, Երասխ համայնք, [redacted] գինու գործարանի և շինությունների անհատույց օգտագործման պայմանագիր, որի հիման վրա 2004 թվականի սեպտեմբերի 14-ին կատարվել է անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցում:

4. 2021 թվականի օգոստոսի 2-ին Պետական ռեգիստրից ստացված նյութերի համաձայն՝ պետական միասնական գրանցամատյանում Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության համար հիմք է հանդիսացել Ընկերության միակ մասնակից Մարտիկ Թևոնյանի՝ 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 1/21 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ:

5. 2021 թվականի օգոստոսի 9-ին Հանձնաժողովում ստացված Ընկերության գրությանը կից՝ ի թիվս այլ նյութերի, ներկայացվել է նաև Ընկերության միակ մասնակից Մարտիկ Թևոնյանի կողմից ընդունված 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 1/21 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ:

6. 2021 թվականի օգոստոսի 27-ին Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2016 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում Ընկերության գործունեության ոլորտն ըստ հարկային մարմին ներկայացրած վավեր հաշվարկի՝ [redacted] արտադրությունն է [redacted] Ընկերությունը հաշվառվել է 1999 թվականի ապրիլի 12-ին, ունի «գործող» կարգավիճակ, նշված ժամանակահատվածում Ընկերությունն ունեցել է համախառն եկամուտ և հարկվող շահույթ: Ընկերության գործունեության դադարեցման մասին գրառումներ առկա չեն:

<u>Համայնքի ղեկավարի գործունեությանն առնչվող տեղեկություններ</u>

Արարատի մարզպետարանի պաշտոնական կայքից (http://ararat.mtad.am/community-leader-council/81/) ստացված տվյալների համաձայն՝ Մարտիկ Թոնյանը 1991 թվականից զբաղեցնում է Արալեզ համայնքի ղեկավարի պաշտոնը:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. 2016 թվականի սեպտեմբերի 18-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Արարատ մարզի Արալեզ համայնքի ղեկավար է ընտրվել Մարտիկ Թևոնյանը, ով շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

2. Պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Մարտիկ Թևոնյանը 1997 թվականի դեկտեմբերի 5-ից գրանցվել է որպես Ընկերության միակ մասնակից:

3. 2021 թվականի օգոստոսի 27-ին Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը փաստացի իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, ունեցել է համախառն եկամուտ և հարկվող շահույթ: Ընկերության գործունեության դադարեցման մասին գրառումներ առկա չեն:

4. 2021 թվականի օգոստոսի 19-ին կնքված բաժնեմասի հավատարմագրային պայմանագրի հիման վրա Մարտիկ Թևոնյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող Ընկերության 100% բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման, մինչ այդ բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնված չի եղել:

5. Մարտիկ Թևոնյանն ընդունել է 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 1/21 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ:

V. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող՝ միջազգային փաստաթղթերում առկա կանոններ

1. Անդրադառնալով պետական, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության կանոնին՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)

անդրադարձել է ընտրովի մարմինների հիմնական գործառույթներին՝ սահմանելով հետևյալը (CDL-AD(2012)027rev, կետ 34).

Ընտրովի մարմինների հիմնական գործառույթներն են՝

- Ծառայել որպես պետական կառավարման ինստիտուտների ներկայացուցիչ,
- Սահմանել հանրային քաղաքականության հիմնական ուղղությունները,
- Որպես կամուրջ ծառայել քաղաքացիների և պետական կառավարման համակարգի միջև:

2. Անհամատեղելիության նման կանոնների բացակայության կամ դրանց անարդյունավետ կիրառման հետևանքով աստիճանաբար զարգանում է այն միտումը, որ ձևավորվում են ֆինանսական մեծ կարողություն ունեցող անձնական (կորպորատիվ) շահեր սպասարկող գործարարներ (գործարարների խմբեր) և հովանավորչական ցանցեր, որոնց գործունեությունը դուրս է գալիս գործարարության սահմաններից և սերտաճում է քաղաքական գործունեության հետ (oligarch) (H. Hale 2014, Patronal Politics: Eurasian Regime Dynamics In Comparative Perspective (Problems of International Politics): Փաստացի անձը ստանձնում է երկակի պարտավորություն (պատասխանատվություն)՝ որպես քաղաքական գործիչ կամ պետական պաշտոն զբաղեցնող անձ և որպես գործարար: Նման դերերի համատեղելիությունը հանդիսանում է շահավետ գործարք, քանի որ բիզնեսը բարենպաստ ազդեցություն է կրում պետական պաշտոնից (քաղաքական որոշումներից) և հակառակը, քաղաքական իշխանության երկարակեցության և շարունակական վերարտադրության համար օգտագործվում է տնտեսական (բիզնես) գործունեությամբ ստացված առավելությունը: Նման իրավիճակում հիմնական նպատակ և շահ է հանդիսանում ձևավորված ցանցի միջոցով սեփական բիզնես և քաղաքական ազդեցության և առավելության ապահովումը: Այս սխեմայի միջոցով միաժամանակ հնարավոր է դառնում հեշտությամբ վերահսկել և կառավարել քաղաքական գործընթացները: Բիզնես գործունեությունն ու դրա դեմ իրականացվող հնարավոր գործողությունները դառնում են քաղաքական որոշումների զսպման և գործողությունների ճնշման միջոց: Նման կերպ գործող իշխանության պայմաններում թեև շարունակում են գործել պետական կառավարման ֆորմալ ինստիտուտներ, օրենքներ, այնուամենայնիվ, դրանք կիրառվում են ընտրողաբար կամ չեն կիրառվում: Աստիճանաբար պետական

կառավարման համակարգը հեռանում է տնտեսական մրցակցության, հավասարության և իրավունքի գերակայության սկզբունքներից, ընկղմվում է քաղաքական կոռուպցիայի մեջ:

VI. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին արգելվել է զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: «Պաշտոն» հասկացությունը նշանակում է անձի համար իրավաբանորեն սահմանված գործառույթների ու իրավասությունների այն ծավալը, որի շրջանակներում նա պետք է մասնակցի համապատասխան մարմնի լիազորությունների իրականացմանը: «Պաշտոն» իրավական ինստիտուտի բովանդակությունը ընդգրկում է այն բոլոր պաշտոնները, որոնք նախատեսվում են ոչ միայն պետական իշխանության, այլև տեղական ինքնակառավարման մարմիններում և առևտրային կազմակերպություններում, այդ թվում՝ նաև նշված մարմինների ապարատներում, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում որևէ պաշտոն, որն օժտված չէ իշխանական լիազորություններով (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010, էջ 868):

2. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված է համայնքի ղեկավարի պաշտոնի անհամատեղելիության պահանջը, որի համաձայն համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության

մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնակարգման համաձայն՝ համայնքների ղեկավարի պաշտոնը հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն: Օրենքի 31-րդ հոդվածով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել են անհամատեղելիության պահանջներ: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

4. Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով ամրագրված են առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացությունները՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

(...)

Նույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) անհատ ձեռնարկատեր լինելը.

2) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում.

3) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

5. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 5-րդ գլխով կարգավորված են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կառավարման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, նույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված է, որ ընկերության բարձրագույն մարմինը հանդիսանում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով), իսկ 36-րդ հոդվածով սահմանված են ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունները, որում ներառված են նաև ընկերության գործադիր մարմինների ձևավորման և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման լիազորությունները:

VII. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

1. Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առևտրային կազմակերպության մասնակից լինելը ձեռնարկատիրական գործունեություն չի դիտարկում, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Նման իրավակարգավորումից հետևում է, որ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ընթացքում առևտրային կազմակերպության մասնակցության արգելքը բացարձակ է, ինչը ենթադրում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի բոլոր գործողություններից, որոնց շրջանակում կարող է ձևավորվել այնպիսի վարքագիծ, որը կարող է որակվել որպես հանրային պաշտոնին զուգահեռ անձի մասնակցության ու ազդեցության պահպանում այլ պաշտոնում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային

կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասկացության՝ իրավական վերոնշյալ կարգավորումների լույսի ներքո գնահատելով սույն վարույթում էական նշանակություն ունեցող փաստերը, բազմակողմանի հետազոտելով ձեռքբերված ապացույցները՝ Հանձնաժողովը փաստում է, որ Արարատի մարզի Արալեզ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Մարտիկ Թևոնյանը, միաժամանակ հանդիսանալով առևտրային բնույթ կրող գործունեություն իրականացնող և փաստացի շահույթ ստացող Ընկերության միակ մասնակիցը, կազմակերպության մասնակցի իր բաժնեմասը մինչև Հանձնաժողովի կողմից համապատասխան վարույթի հարուցումը, երբևէ չէր հանձնել հավատարմագրային կառավարման: Հանձնաժողովը, գնահատման առարկա դարձնելով նաև Մարտիկ Թևոնյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Ընկերության 100% բաժնեմասը վարույթի ընթացքում հավատարմագրային կառավարման հանձնելու վարքագիծը, անհրաժեշտ է համարում նշել, որ պաշտոնատար անձանց նկատմամբ վերոնշյալ իրավանորմերով սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը կրում է իմպերատիվ և շարունակական (չընդհատվող) բնույթ: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որոշակի ժամանակում արդեն իսկ դրսևորել է անգործություն (հանդիսանալով առևտրային կազմակերպության մասնակից՝ բաժնեմասը չի հանձնել հավատարմագրային կառավարման)՝ չպահպանելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք սահմանող իրավանորմը՝ հանդիսանում է անհամատեղելիության պահանջների խախտում թույլ տված անձ, անկախ այն հանգամանքից, որ կոնկրետ պահի բաժնեմասը, այնուամենայնիվ, հանձնում է հավատարմագրային կառավարման:

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելի առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու հասկացության՝ իրավական վերոնշյալ կարգավորումների լույսի ներքո գնահատելով սույն վարույթում էական նշանակություն ունեցող փաստերը, բազմակողմանի հետազոտելով ձեռքբերված ապացույցները՝ Հանձնաժողովը փաստում է նաև, որ Արարատի մարզի Արալեզ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Մարտիկ Թևոնյանը ընդգրկված է եղել

Ընկերության կառավարման մարմնում (ընդհանուր ժողովում): Վերջինս, ընդունելով 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 1/21 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և նոր ղեկավար նշանակելու վերաբերյալ, փաստացի իրականացրել է Ընկերության կառավարման գործառույթ՝ չպահպանելով առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու արգելք սահմանող իրավանորմը: Նշվածով պայմանավորված՝ Մարտիկ Թևոնյանն այս առումով ևս թույլ է տվել անհամատեղելիության պահանջների խախտում:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ Մարտիկ Թևոնյանը, իրականացնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 4-րդ, 7-րդ մասի 3-րդ կետերով նախատեսված արարքները, իր գործողություններով խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Մարտիկ Թևոնյանի կողմից խախտվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ